ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2017 թվականի դեկտեմբերի 6-8-ը Բելառուսի Հանրապետություն (ք. Մինսկ) գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը՝**

Ալիկ Հակոբյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության առողջապահական տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝**

Քաղաք Մինսկ, Բելառուսի Հանրապետություն, 6-8 դեկտեմբերի 2017թ.

4. **Հրավիրող կողմը՝**

Բելառուսի Հանրապետության աշխատանքի և սոցիալական պաշտպանության նախարարության աշխատանքի պետական տեսչության դեպարտամենտ, ԱՊՀ մասնակից երկրների և Մոնղոլիայի աշխատանքի տեսչությունների տարածաշրջանային դաշինքի նախագահող

5. **Գործուղման նպատակը՝**

Մասնակցել ԱՊՀ մասնակից երկրների և Մոնղոլիայի աշխատանքի տեսչությունների տարածաշրջանային դաշինքի 2017 թվականի գլխավոր կոնֆերանսին

6. **Քննարկված թեմաները՝**

Քննարկվեցին ԱՊՀ մասնակից երկրների և Մոնղոլիայի աշխատանքի տեսչությունների տարածաշրջանային դաշինքի 2017 թվականի աշխատանքային ծրագրի կատարման արդյունքները, Աշխատանքի տեսչությունների միջազգային ասոցիացիայի (ԱՏՄԱ) 2017 թվականի սեպտեմբերի 7-ից 8-ը Սինգապուրում տեղի ունեցած Կոնգրեսի արդյունքները, «Բնակության երկրից դուրս աշխատողների հետ տեղի ունեցած արտադրական դժբախտ դեպքերի քննության կարգը» 1994 թվականի Համաձայնագրի լրացումների վերաբերյալ առաջարկությունները, ԱՊՀ մասնակից երկրների և Մոնղոլիայի աշխատանքի տեսչությունների տարածաշրջանային դաշինքի համագործակցության ուղղություններն Աշխատանքի

Միջազգային Կազմակերպության Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի բյուրոյի հետ:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Բելառուսի Հանրապետության աշխատանքի և սոցիալական պաշտպանության նախարարության աշխատանքի պետական տեսչության դեպարտամենտի տնօրեն Վ. Սիդորովիչը ներկայացրեց ԱՊՀ մասնակից երկրների և Մոնղոլիայի աշխատանքի տեսչությունների տարածաշրջանային դաշինքի 2017 թվականի աշխատանքային ծրագրի կատարման արդյունքները:

Ռուսաստանի Դաշնության աշխատանքի և զբաղվածության դաշնային ծառայության ղեկավարի տեղակալ Ի. Շկլովեցը ներկայացրեց աշխատանքի տեսչությունների միջազգային ասոցիացիայի (ԱՏՄԱ) 2017 թվականի սեպտեմբերի 7-ից 8-ը Սինգապուրում տեղի ունեցած Կոնգրեսի արդյունքները: Ներկայացվեցին աշխատավայրում «0»-ական վտանգի ապահովման, առանց մասնագիտական հիվանդությունների աշխատատեղերի, դժբախտ դեպքերի կանխարգելման արդյունավետության բարձրացման նպատակով տվյալների ժամանակին և համապարփակ հավաքագրման և վիճակագրության իրականացման, անվտանգ աշխատատեղից դեպի հարմարավետ աշխատատեղեր կոնցեպցիաների ներդրման Կոնգրեսի ընթացքում նախանշված ուղղությունները:

Բելառուսի Հանրապետության աշխատանքի և սոցիալական պաշտպանության նախարարության աշխատանքի պետական տեսչության դեպարտամենտի կողմից ներկայացվեց «Բնակության երկրից դուրս աշխատողների հետ տեղի ունեցած արտադրական դժբախտ դեպքերի քննության կարգը» 1994 թվականի Համաձայնագրի լրացումների վերաբերյալ Դաշինքի մասնակիցների կողմից ստացված առաջարկությունները:

Ռուսաստանի Դաշնության աշխատանքի և զբաղվածության դաշնային ծառայության ղեկավարի տեղակալ Ի. Շկլովեցը ներկայացրեց ԱՊՀ մասնակից երկրների և Մոնղոլիայի աշխատանքի տեսչությունների տարածաշրջանային դաշինքի համագործակցության ուղղությունները Աշխատանքի Միջազգային Կազմակերպության Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի բյուրոյի հետ:

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության առողջապահական տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ Ալիկ Հակոբյանը

ներկայացրեց 2017 թվականին աշխատանքի տեսչության համակարգում տեղի ունեցած օրենսդրական փոփոխությունները տեղի ունեցող տեսչական բարեփոխումների շրջանակներում: Ներկայացվեց, որ ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 27-ի N 444-Ն որոշմամբ ստեղծվել է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության առողջապահական տեսչական մարմինը, որի նպատակներից է սահմանվել աշխատողների առողջության պահպանումն ու անվտանգության ապահովումը, իսկ խնդիրներից են ռիսկերի կառավարումը և Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողության, ինչպես նաև կանխարգելիչ միջոցառումների կազմակերպումը աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման բնագավառում:

Դաշինքի մասնակից երկրների ներկայացուցիչներն իրենց ելույթներում ներակայացրեցին իրենց երկրներում աշխատանքի տեսչության համակարգերում տեղի ունեցած օրենսդրական փոփոխությունները:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝ հարցի վերաբերյալ ընդունվեց հետևյալ որոշումը

Օրակարգի 1-ին կետ

ԱՊՀ մասնակից երկրների և Մոնղոլիայի աշխատանքի տեսչությունների տարածաշրջանային դաշինքի 2017 թվականի աշխատանքային ծրագրի կատարման արդյունքները:

Հարցի վերաբերյալ ընդունվեց հետևյալ որոշումը.

Ի գիտություն ընդունել ԱՊՀ մասնակից երկրների և Մոնղոլիայի աշխատանքի տեսչությունների տարածաշրջանային դաշինքի 2017 թվականի աշխատանքային ծրագրի կատարման արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը:

Օրակարգի 2-րդ կետ

Աշխատանքի տեսչությունների միջազգային ասոցիացիայի (ԱՏՄԱ) 2017 թվականի սեպտեմբերի 7-ից 8-ը Սինգապուրում տեղի ունեցած Կոնգրեսի արդյունքները:

Հարցի վերաբերյալ ընդունվեց հետևյալ որոշումը.

Ի գիտություն ընդունել աշխատանքի տեսչությունների միջազգային ասոցիացիայի (ԱՏՄԱ) 2017 թվականի սեպտեմբերի 7-ից 8-ը Սինգապուրում տեղի ունեցած Կոնգրեսի արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը: Քննարկել և ներկայացնել առաջարկություններ հետագա գործունեության ուղղությունների վերաբերյալ, կարևորելով աշխատավայրում 0-ական վտանգի ապահովման, առանց մասնագիտական հիվանդությունների աշխատատեղերի, դժբախտ դեպքերի կանխարգելման արդյունավետության բարձրացման նպատակով տվյալների ժամանակին և համապարփակ հավաքագրման և վիճակագրության իրականացման, անվտանգ աշխատատեղից դեպի հարմարավետ աշխատատեղեր կոնցեպցիաները:

Օրակարգի 3-րդ հարց

«Բնակության երկրից դուրս աշխատողների հետ տեղի ունեցած արտադրական դժբախտ դեպքերի քննության կարգը» 1994 թվականի Համաձայնագրի լրացումների վերաբերյալ առաջարկություններ:

Հարցի վերաբերյալ ընդունվեց հետևյալ որոշումը.

«Բնակության երկրից դուրս աշխատողների հետ տեղի ունեցած արտադրական դժբախտ դեպքերի քննության կարգը» 1994 թվականի Համաձայնագրի լրացումների վերաբերյալ նախագծի քննարկումները բերել ավարտական տեսքի, նպատակ ունենալով ապահովել մյուս երկրների տարածքում գործուղված աշխատողների հետ տեղի ունեցած արտադրական դժբախտ դեպքերին արագ արձագանքումը: Քննարկումների արդյունքում առաջարկություններ ներկայացնել ԱՊՀ երկրների գործադիր կոմիտե:

Օրակարգի 4-րդ հարց

ԱՊՀ մասնակից երկրների և Մոնղոլիայի աշխատանքի տեսչությունների տարածաշրջանային դաշինքի համագործակցության ուղղությունները Աշխատանքի Միջազգային Կազմակերպության Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի բյուրոյի հետ:

Հարցի վերաբերյալ ընդունվեց հետևյալ որոշումը.

ԱՄԿ հետ ձեռք է բերվել պայմանավորվածություն, այն մասին, որ 2018 թվականին ԱՄԿ-ն կֆինանսավորի Դաշինքի շրջանակներում 2 միջոցառումների իրականացումը՝ 2018 թվականի ապրիլ ամսին Մոսկվա քաղաքում, և 2018 թվականի դեկտեմբեր ամսին՝ Երևան քաղաքում:

Օրակարգի 5-րդ հարց

Դաշինքի մասնակից երկրներում աշխատանքի տեսչության համակարգերում տեղի ունեցած օրենսդրական փոփոխությունները:

Հարցի վերաբերյալ ընդունվեց հետևյալ որոշումը.

Ի գիտություն ընդունել մասնակից երկրների կողմից ներկայացված տեղեկատվությունը:

Օրակարգի 5-րդ հարց

ԱՊՀ մասնակից երկրների և Մոնղոլիայի աշխատանքի տեսչությունների տարածաշրջանային դաշինքի 2018 թվականի նախագահության ընտրություն:

Հարցի վերաբերյալ ընդունվեց հետևյալ որոշումը.

Կայացած ընտրության արդյունքում ԱՊՀ մասնակից երկրների և Մոնղոլիայի աշխատանքի տեսչությունների տարածաշրջանային դաշինքի 2018 թվականի նախագահությունը հանձնվեց Հայաստանի Հանրապետությանը:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Նկատի ունենալով 2018 թվականին Դաշինքի նախագահության ստանձնումը, առաջարկություններ ներկայացվեցին 2018 թվականին աշխատանքային ծրագրի ուղղությունների վերաբերյալ:

Գործուղվողը՝

Ալիկ Հակոբյան

10. Ստորագրությունը, ամսաթիվը՝

12.12.2017թ.